շնորհաց առատաձիր զեղման խորհրդաւոր ժամին. յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին է բոլորում այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Ա.

Հայրապետական տնօրինութիւնք.

Կոնդակ յանուն ս. Սինոդի ս. Էջմիածնի, որով յայտնեցաւ զմտադրութենէն կատարելոյ զօրհնութիւն ս. Միւռոնի և հրամայեցաւ հոգալ այժմէն զկարևոր պատրաստութեանց ընդ ձեռն կարգեալ Ցանձնաժողովոյ. թ. 431։

— Ցանուն վիճ. Ատենին Վրաստանի և Իմէրեթի, որով յայտնեցաւ զկարգմանէ Արամայ (Ադաֆոն) Ամբարեգեան ի կառավարիչ անտառին վանուցն Հաղարծնոյ. թ. 441։

— Ցանուն վարչութեան Հոգ. ճեմարանի Մայր Աթոռոյ, որով հրամայեցաւ հոգալ ընդ ձեռն նոյն վարչութեան զծախս Հոգ. ճեմարանի. թ. 444։

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի, որով հրամայեցաւ առնել զօրինաստման կարգադրութիւն յաղագս ընդունելոյ ի տիրապետութիւն Մայր Աթոռոյ զչորս դեսեատին գետինն նուիրեալ ի Տիկին Եկատերինեայ Նաղիրեան Տփխեցւոյ. թ. 450։

— Յանուն Պետրոսի Բատալեան ի Բանանց գեղջէ, որով կարգեցաւ ի գանձապահ գանձանակաղրամոց ս. Էջմիածնի յեկեղեցւոջ նոյն գեղջ. թ. 460։

— Յանուն Հոգևոր կառավարութեան Հայոց Գանձակայ, որով հրամայեցաւ թոյլատրել երկուց գանձակեցւոց բառնալ յանտառէն վանուցն Զարեբայ զփայտեղէնսն զորս գնեցին. թ. 473։

— Յանուն անդամոյ ս. Սինոդի Գեր. Տ. Յուսիկ եպիսկոպոսի, որով հրամայեցաւ ձեռնադրել յաստիճան սարկաւագութեան զմիաբան Մայր Աթոռոյ զդպիր Սպրիդոն Մելիքեան՝ վերակոչելով Ստեփանոս. թ. 478։

— Յանուն ս. Սինոդի ս. Էջմիածնի, որով հրամայեցաւ ի տեղի Տ. Բենիկ վարդապետի կարգել ի քննիչ կալուածոց Արցախայ զՏ. Մատթէոս և զՏ. Խորէն վարդապետս. թ. 488։

— Յանուն ս. Սինոդի, որով հրամայեցաւ առաջի առնել Գեր. վանահօր Սևանայ Տ. Սարգիս եպս.-ի ձեռնադրել ի կուսակրօն քահանայ զկիսասարկաւագ Սահակ Աստուածատրեան ի միաբան վանուցն Հաղարծնոյ. թ. 489։

— Յանուն ս. Սինոդի, որով հրամայեցաւ կարգել զմին յանդամոց Սինոդի ի քննութիւն գործոց գործակալին Երևանայ Տ. Վահան քահ.-ի Մամիկոնեան. թ. 491։

— Յանուն Վանական կառավարութեան Մայր Աթոռոյ, որով հրամայեցաւ յանձնել զվանսն ս. Հողակաթի Տ. Գրիգորիս վարդապետի՝ կարգելոյն ի վանահայր ի տեղի նորոգ հանգուցեալ Յովհաննէս վարդապետի. թ. 516։

— Յանուն Գեր. Տ. Գէորգ արքեպս.-ի Թեմակալի Վրաստանի և Իմերեթի, որով յայտնեցաւ զկարգմանէ Տ. Տիրայր վարդապետի ի վանահայր ս. Սարգիս վանուց Տփխեայ և ի կառավարիչ Էջմիածնապատկան կալուածոց, ի տեղի Տ. Արսէն

վարդապետի, որ ունի գնալ յարտասահման ի պէտս բժշկութեան. թ. 518։

— Յանուն Տ. Տիրայր վարդապետի, որով հրամայեցաւ նման գնալ ի Տփխիս և ստանձնել զպաշտօնս Տ. Արսէն վարդ.-ի, ազատ լինելով ի փոխանորդութենէն վիճակին Ալէքսանդրապոլու. թ. 519։

— Յանուն Հոգեշնորհ Տ. Եղիշէ Ծ. վարդապետի, թեմական Ատրպատականի, որով հրամայեցաւ նմա ընդունել զբանադրեալ Յակոբջան Մարգարեան Տարաշամբեցին ի հաղորդութիւն ս. եկեղեցւոյ և թոյլատրել նմա պսակել՝ արձակեալ ի Հայրապետական բանադրանաց. թ. 521։

Հայրապետական պարգեւք.

Ըստ միջնորդութեան Ամեն. Պատրիարքին Հայոց Թուրքիոյ Տ. Մազաքիա արքեպիսկոպոսի շնորհեցան վարդապետական լանջախաչք Տ. Կորիւն վարդ.-ի Էլիսարամեան՝ առաջնորդին Զարսանճադի և Զմշկածադի, Տ. Վահրիմ Ծ. վարդ.-ի Եահլամեան՝ քարոզչի Մաղրի—Քէօյ գեղջ, Տ. Գնել վարդ.-ի Գալէմքեարեան՝ առաջնորդի Քղւոյ, Տ. Թորգոմ Ծ. վարդ.-ի Պիլիճեան՝ փոխ. տեսչի Դպրեվանուց Արմաշու, Տ. Արիստակէս ա. քահ.-ի Գերճակեան՝ առաջն. տեղապահի Ադրիանապոլսոյ։

Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Շնորհափայլ Մայրապետի Կուսանաց անապատին Տփխեաց սարկաւագուհի Փեփրոնեայ Խուբեանց, յաղագս նուիրաբերութեան նորա և այլոց կուսանաց նոյն անապատին եկեղեցական զարդուց և զգեստուց ի վանսն ս. Շողակաթի. թ. 494։

— Օրհնութեան յանուն ուսուցիչ պ. Մկրտչի Պալեան, որ ունի տօնել ի մեծ աւուրս գյիսնամեակ ուսուցչութեան իւրոյ. թ. 498։

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն պ. Լուդվիկայ Սարգսեան Յարութիւնեանց Բագուեցւոյ, յաղագս նուիրաբերութեան նորա 5000 բուբլեաց վասն շինութեան Ճանապարհի վանուցն Սանահնի. թ. 503։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն բագուաբնակ պ. Ղազարոս Յովհաննիսեան Մայիլեանց, յաղագս յանձնառութեան նորա ի կառուցանել զեկեղեցին Շամախի քաղաքի Ծախիւք իւրովք. թ. 505։

ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

1903 թ. յունուարի 8. Սինոդը հրամայեց՝ Կարս քաղաքի եկեղ. նոր շինութեան վերաբերեալ ամբողջ գործը և Տփխիսի դատաստանական պալատի կոչնագիրը ուղարկելով Տփխիսի թեմական ատեանին, պատուիրել նորան յանձնել Սինոդի հաւատարմատար պ. Սամսոն Յարութիւնեանցին։

— Յունուարի 10. Սինոդը հրամայեց՝ անվաւեր համարել Ապրակունեցի Ղազարեանի և Մինասեանի պայմանագրերը, որոնց տրուած էր կապալով Երնջակի վանքի ամայի գետինը, ջրաղացը և վանքի անտառը նոյն վանքի նախորդ վանահայրերից, և նոր ամուրգ նշանակել Հին Նախիջևանի Հոգ. կառավարութեան ատեանում՝ պայմանների և սակարկութեան թղթերը առաջարկելով Սինոդի հաւանութեան և հաստատութեան։

— Յունուարի 10. Շամախաբնակ Թառայեանց եղբայրների տան յատակագիծը, կալուածագիրը և քաղաքական